ԱԳՈՒԼԻՍԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

ԱՐԴԱՄ ԱՅՎԱԶՅԱՆ

Պատմական Հայաստանի Գողթն գավառի կենտրոն վաճառաշահ Ագուլիս քաղաքն ընդգրկում էր այժմյան Նախիջևանի Վերին և Ներքին Ագուլիս գյուղերի տարածքը։ XVI—XIX դդ. ընթացքում Ագուլիսը հիմնականում բաժանված է եղել երկու մեծ թաղի՝ Վերին և Ներքին, որոնք ունեին 10 նշանավոր թաղամասեր (Վերին գետ, Վանքի թաղ, Նուրիջանենց մահրա, Խաճաճոր, Մեյդանի կամ Մալեյի խուպան, Զիգ փուղ, Խշկաշեն և այլն)[1]։

Ագուլիսի ճարտարապետական հուշարձաններից շատ թե քիչ հայտնի է ս. Թովմա վանքը[2]։ XIX դ. կեսերին Ագուլիսի հուշարձաններից համեմատաբար լավ վիճակում են եղել 10-ը[3]։ Այժմ պատմական քաղաքի Վերին գետ թաղամասում կանգուն է ս. Ստեփանոս եկեղեցին, Վանքի թաղում՝ ս. Թովմա վանքը, քաղաքի կենտրոնական մասում՝ ս. Քրիստափոր եկեղեցին։ Միջին փուղ թաղում ավերակ է ս. Հակոբ Ալփան կամ «Ընձանաց լույս» եկեղեցին, իսկ ս. Քրիստափոր եկեղեցուց հարավ-արևմուտք՝ Ագուլիսի շուկայից մոտ 200 մ ներքև, գտնվում են ս. Շմավոն եկեղեցու ավերակները։ Ս. Շմավոնից մոտ 250—300 մ դեպի հարավ-արևմուտք՝ անմիջապես ձորի լեռնալանջին է գտնվում ս. Հովհաննես-Մկրտիչ եկեղեցին, որը դարձյալ վնասված է։ Նրանից մոտ 300 մ ներքև՝ «Փոքր սար» կոչված բլուրի վրա, կանգուն է ս. Հակոբ-Հայրապետ եկեղեցին։ Ագուլիսի հարավ-արևելյան մասում, քաղաքից դուրս՝ լեռնալանջին, գտնվում են Մեծ Աստվածածին եկեղեցու ավերակները։ Ստորին Ագուլիսում կամ Դաշտ-Ագուլիսում կանգուն է ս. Երրորդություն կամ «Երեք խորանի» կոչվող եկեղեցին, որին հյուսիսային կողմից կից է «Ամարային» եկեղեցին։ Պատմական քաղաքի շրջակայքում, նրա տարբեր թաղամասերում ավերակ վիճակում են գտնվում նաև 2—3 եկեղեցիներ, 5—6 մատուռներ, բերդեր, կամուրջներ և այլ հուշարձաններ։

Ագուլիսի ճարտարապետական հուշարձաններն աչքի են ընկնում հետաքրքիր առանձնահատկություններով։ Հատկապես ուշագրավ են հուշարձանների բազմանիստ գլխավոր խորանները։ Հայաստանի ճարտարապետական հուշարձանների խորանների ավանդական ձևի՝ կիսաշրջանաձև հորինվածքի թվում Ագուլիսում հանդիպում ենք և՛ ուղղանկյուն (ս. Հակոբ-Հայրապետ), և՛ հնգանիստ (ս. Հովհաննես-Մկրտիչ), և՛ յոթանիստ (ս. Թովմա, «Ամարային», ս. Շմավոն) խորանների կիրառության։

---

[1] Ե. Լալայան, Գողթն կամ Օրդուբատի դամ Վերին-Ագուլիսի ոստիկանական շրջան, Թիֆլիս, 1904, էջ 63—64.

[2] Դ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1891, էջ 323—337, Ե. Լալայան, նշվ. աշխ., էջ 68—72։ 1975—1977 թթ. հաճախակի լինելով Ագուլիսում, ուսումնասիրել և չափագրել ենք տեղի հուշարձանները, որոնց մի մասը ներկայացվում է սույն հոդվածում։

[3] И. Озаровский, Военное обозрение Закавказья, СПб., 1883, стр. 91.

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Ագուլիսի այժմյան կանգուն և կիսականգուն պատմաճարտարապետական հուշարձանների մի մասը հիմնվել է վաղ միջնադարում և հիմնականում վերանորոգվել է XII—XIV դդ. և XVII—XVIII դդ.։ Ագուլիսի ճարտարապետական հուշարձանների շարքում իր ճարտարապետությամբ աչքի է ընկնում ս. Թովմա հռչակավոր վանքը, որը գարեր շարունակ հանդիսացել է Գողթն գավառի եպիսկոպոսանիստն ու մշակութային կարևոր կենտրոնը։ Աբրահամ Կրետացին ս. Թովմա վանքը որակավորել է որպես «հիանալի եւ զարմանալի տեսողաց»[4]։ Ըստ վանքի տաճարի արևմտյան մուտքի բարավորի XVII դ. ընդարձակ արձանագրության.

«Բարդուղիմէոս ի հայս եկեալ,
Զտուն տեառն նախ աստ հիմնարկեալ,
Սուրբ Թովմայի առաքելոյն անուն կոչեալ,
Գահ հաստատեալ։
Կոմսի անուն զիւր աշակերտն
Տեսուչ տեղւոյս զնա եդեալ.
Որ եւ զտուն Գողթ. գաւառիս
. . . . . .
Սուրբ Գրիգոր յորժամ եկեալ
Ի առաքելոյն նոմոս տեսեալ
Ձեռագրով նոյն հաստատեալ,
Եւ նզովիւք ամրափակեալ,
Յամի Տեառն ՉՃ եւ հինգ հասեալ,
Լուսաւորչին պատճէն գրեալ
Արձան գրիս, որ աստ եդեալ»[5]։

Ս. Թովմայի տաճարը, ինչպես նաև համալիրը, մի քանի անգամ վերանորոգվել է։ Վանքապատկան շինությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանց մեծ մասը հիմնականում կառուցվել է XII—XIII դդ., որոնք ևս վերանորոգվել են, ավելացել են նոր շինություններ։ Օրինակ, Ս. Թովմայի վանական համալիրը և նրա եկեղեցին 1636 թ. նորոգել է Մովսես կաթողիկոսի աշակերտ, ս. Թովմայի առաջնորդ Խաչատուր վարդապետը։ Նա «նորոգեաց ի հիմանց զսուրբ ուխտս Թումայի, բարձրաբերձ կամարակապ և գմբեթաձեւ՝ զտուրբ եկեղեցին, և բարձր պարսպով և չորեքանկիւնի խուցերով և մուդբախերով (խոհանոց.—Ա. Ա.) զարգարեաց. և բազում նեղութեամբ և չարչարանօք շինեաց»[6]։ Ս. Թովմայի պարիսպները և վանական շինությունները 1668 թ. վերանորոգել է Խաչատուր վարդապետի հետնորդ Պետրոս վար-

---

4 «Աբրահամ Կաթողիկոս Կրետացւոյ Պատմութիւն անցիցն իւրոյ եւ Նատր-Շահին պարսից», էջմիածին, 1870, էջ 77։

5 Ս. Թովմայի այս և մյուս արձանագրությունները տե՛ս Յովհաննես Շահխաթունեանց, Ստորագրութիւն կաթողիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. 2, էջմիածին, 1842, էջ 324—327, Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 326—329, Ե. Լալայան, նշվ. աշխ., էջ 70—72, Հ. Ոսկյան, Վասպուրական—Վանի վանքերը, Բ մաս, Վիեննա, 1942, էջ 677—690։ Արևմտյան մուտքի այս արձանագրությունից մեջ բերվող հատվածը հրապարակում ենք մեր ընթերցմամբ։

6 Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 326—327։

դապետը[7]։ Ըստ ս. Թովմայի տաճարի արևմտյան ճակատի, զանգակատան հյուսիսային և հարավային կողմերում տեղադրված արձանագրությունների, տաճարը նորոգվել է նաև 1694—95 թթ.։ Ագուլիսում ընդօրինակված ձեռագրերից մեկի հիշատակարանում ևս նշված է, որ «...թվին ՌՃԽԳ (1694) շինեցաւ սբ Թումայի առաքելոյն եկեղեցին. Ագուլեաց վանաց...»[8]։ Այսպիսով, պետք է եզրակացնել, որ դեռևս IV դ. հիմնարկված ս. Թովմա վանքը հիմնականում վերակառուցվել է XII—XIII դդ. և XVII դ.։ Գրչագիր աղբյուրներում ս. Թովման հիշատակվում է XIV դ.[9]։



Նկ. 1. Ագուլիսի ս. Թովմա տաճարի գմբեթը հարավ-արևմուտքից։

Ս. Թովմայի տաճարի (նկ. 1) կառույցը մեծ հետաքրքրություն է ներկայացնում միջնադարի վանական համալիրների ճարտարապետության ուսումնասիրման առումով։ Ս. Թովմա վանքը միջնադարյան մի շարք խոշոր համալիրների նման (Խոր-Վիրապ, Կնևանք, Տաթևի Մեծ անապատ, Աստապատի

7 «Ջաբարիա Ագուլեցու օրագրությունը», Երևան, 1938, էջ 78։

8 «Ցուցակ հայերէն ձեռագրաց Թավրիզի», կազմեց Հ. Ա ճ ա ռ յ ա ն, Վիեննա, 1910, էջ 116։

9 Երևանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 1571, թ. 285բ։

Կարմիր վանք, Լիմ անապատ և այլն) ունի ուղղանկյուն, կանոնավոր հատակագիծ, որի միակ տաճարը տեղադրված է վանական համալիրի մեջտեղում։ Տաճարի շուրջը, քառանկյունի բարձր պարիսպների պարագծով, տեղադրված են համալիրի տնտեսական, բնակելի, օժանդակ և այլ շինություններ, որոնք տաճարից հեռու են 15—20 մ։ Դրա շնորհիվ տաճարի կենտրոնական դիրքն ու պաշտամունքային դերն ավելի են շեշտվել։



Նկ. 2. Ագուլիսի ս. Թովմա տաճարի գլխավոր հատակագիծը (լափագրությունը Ա. Այվազյանի)։

Տաճարը, որը քառամույթ գմբեթավոր բազիլիկա է, կառուցված է բազալտից և սրբատաշ կարմրերանգ քարերից՝ արևելք-արևմուտք առանցքով։ Տաճարը բաղկացած է ընդարձակ և յոթանիստ խորանից, երկհարկանի զույգ ավանդատներից ու աղոթասրահից (նկ. 2)։ Ունի երեք գեղեցիկ կամարազարդ մուտքեր՝ արևմտյան, հյուսիսային և հարավային ճակատներում (վերջին երկուսը այժմ փակված են)։ Աղոթասրահի խաչաձև կտրվածքով չորս հաստահեղույս մույթերի վրա կանգնեցված է քարաշեն և գեղեցիկ, 12 պատուհաններով գմբեթը։ Գեղեցիկ և լուսավոր ինտերյեր ունեցող այս տաճարի բեմի արևմտյան պատը, որն այժմ քանդված է, կառուցված է եղել մարմարյա քարերից։ Խորանը, որի որմնախորշերն ունեն ձևավոր սլաքաձև կամարներ, լուսավորվում է արևելյան որմում բացված խաչաձև գեղեցիկ լուսամուտով։

Ավագ խորանի աջ և ձախ կողմերում գտնվող երկհարկանի ավանդատներն ուղղանկյունաձև են։ Որմնախորշերն ունեն լայն բացվածքներ և ավարտվում են կիսաշրջանաձև կամարներով։ Հյուսիսային ավանդատան ներսում՝ հյուսիսային որմին և ավանդատան արևմտյան որմին կցված, անկյունային մասի քարե աստիճանները տանում են դեպի տաճարի վերնատունը, տանիքը, ավանդատան ծածկի և կառույցի այլ մասերում գտնվող հատուկ թաքստոցներն ու պահարանները։ Եկեղեցու հարավային ավանդատունը ծառայել է որպես թանգարան։

Ս. Թովմա վանքի տաճարի ներքին տարածքը զարդարվել է բարձրարվեստ որմնանկարներով, որոնք 1680-ական թվականներին կատարել է հռչակավոր նկարիչ, բանաստեղծ ու երգասաց Նաղաշ Հովնաթանը[10]։ Դժբախտաբար տաճարի որմնանկարների մեծ մասը քայքայվել է։ XIX դ. վերջերին Մ. Փափազյանը մասնակիորեն նկարագրել է այդ որմնանկարների մի մասը և հրատարակել երկու լուսանկար[11]։ Այժմ ս. Թովմա վանքի տաճարում պահպանվել են գմբեթի, թմբուկի, գմբեթատակ մասերի, արևմտյան մուտքի և չորս մույթերի վերին մասերի որմնանկարները։

Ս. Թովմայի տաճարը գեղեցիկ է նաև արտաքին տեսքով։ Այն հատկապես աչքի է ընկնում արևմտյան, հյուսիսային և հարավային ճակատներում գտնվող մուտքերի արտահայտիչ քանդակազարդերով ու պատկերաքանդակներով, բարավորների ընդարձակ արձանագրություններով, մուտքերի առջև կառուցված զանգակատներով։ Տաճարի արևմտյան մուտքը երիզված է բարձր կամարով և ունի գեղեցիկ քանդակազարդ գոտիներ։ Մուտքի բարավորից վերև՝ կամարի տակ, քառանկյուն շրջանակի մեջ, տեղադրված է «Թովմայի անհավատությունը» քանդակը (նկ. 3), ուր Քրիստոսը պատկերված է ամբողջ հասակով՝ մեծ խաչափայտը գրկած։ Նա աջ ձեռքը վեր է բարձրացրել և հայացքով Թովմային մատնացույց է անում գեղարդով խոցված իր աջ կողը։ Թովման, որը պատկերված է նստած, հավաստիանալու համար աջ ձեռքով մեծ զգուշությամբ շոշափում է Քրիստոսի վերքը։ Բարձրաքանդակն է՛լ ավելի արտահայտիչ է նրա շուրջը երիզող Նաղաշ Հովնաթանի որմնանկարներով։ Բարձրաքանդակի վերևում աստծո պատկերն է, ձախ կողմում՝ Մագթաղինեի կանգուն դիմապատկերը, իսկ աջում՝ Աստվածամոր կյանքից մի դրվագ։ Այս կոմպոզիցիոն պատկերումները մուտքի խորացող կամարի քանդակազարդերի հետ համահնչուն են, կապվում են մուտքի ճարտարապետության հետ և է՛լ ավելի գեղեցկություն ու հանդիսավորություն հաղորդում նրան։ Արևմտյան մուտքի մոնումենտալությունն ընդգծվում է նաև նրա բարավորի 9 տողանի ընդարձակ արձանագրությամբ։ Գեղեցիկ է եղել նաև այս մուտքի փայտյա դուռը (այժմ՝ խիստ վնասված)։ Քայքայված է նաև այդ դռան վերևի մասում գտնվող արձանագրությունը[12]։

Արևմտյան մուտքի առջև սրբատաշ քարերով կառուցված է գեղեցիկ զանգակատուն, որի երկու մույթերի կամարները նստած են եկեղեցու արևմտյան որմնամույթերի վրա։ Այս զանգակատունը կառուցվել է 1831 թ., շուշիաբնակ

---

10 Մ. Ղազարյան, Հայ կերպարվեստը XVII—XVIII դդ., Երևան, 1974, էջ 150—151։

11 Մ. Փափազյան, Հնություններ վանօրէից, Գողթան գավառ, լուսանկարչական ալբոմ. Վաղարշապատ, 1891, № 348, 349։

12 Ն. Լալայան, նշվ. աշխ., էջ 70։

ազուլեցի Հախումյան տոհմի կողմից[13], 1825 թ. հիմնարկված ազյուսակերտ զանգակատան տեղում։ Այս զանգակատունը վերանորոգվել է 1904 թ.[14],

Նկ. 3. Ս. Թովմա տաճարի արևմտյան մուտքի բարձրաքանդակը և նաղաշ Հովնաթանի որմնանկարները։

Գեղեցիկ քանդակազարդ գոտիներով են երիզված նաև տաճարի հյուսիսային և հարավային մուտքերը։ Տաճարի հյուսիսային մուտքի 8 տողանոց արձանագիր բարավորից վերև՝ մուտքի խորաքանդակ բարձր կամարի տակ, քանդակված է Պողոս առաքյալի բարձրաքանդակը. նա ձախ ձեռքին բռնել է դավազան-խաչափայտը, աջ ձեռքին՝ օձ, իսկ թևի տակ ունի ավետարան։ Այս մուտքի զանգակատունը ևս կառուցված է սրբատաշ քարերից, երկու մույթերի հորինվածքով, որի ծածկում կանգնեցված է եղել վեց մույթանի փոքրիկ ռոտոնդան (փոքրիկ գմբեթը)։

Գեղեցիկ է նաև տաճարի հարավային մուտքը, որը ևս օժտված է բարձրաքանդակով և արձանագրությամբ։ Այս մուտքի մոտ չորս մույթերի հորինվածքով, սրբատաշ քարերով կառուցված է գեղեցիկ մատուռ-դամբարան, որը մուտքից մոտ մեկ մետր դեպի արևմուտք է տեղադրված և նույնքան էլ հեռու է գտնվում եկեղեցու հարավային որմից։ Այս մատուռի ծածկում կանգնեցված է քառամույթ փոքրիկ ռոտոնդան։ Ամենայն հավանականությամբ այն ս. Թովմա վանքի եպիսկոպոս Խաչատուր վարդապետի շիրիմի վրա վանքի առաջնորդ Պետրոս վարդապետի 1666 թ. կառուցած մատուռն է։ Այդ է վկայում նաև Զ. Ագուլեցին, նշելով, որ Պետրոս վարդապետը Խաչատուր

13 Մ. Փափազյան, նշվ. աշխ., № 346, Ե. Լալայան, նշվ. աշխ., էջ 70։
14 Հ. Ոսկյան, նշվ. աշխ., էջ 679։

վարդապետի շիրիմի վրա «տաշած քարով մեծ մատուռ շինեց եկեղեցոյ յարաւու կողմն»[15]։

Ս. Թովմա վանքն ունի ավելի քան 50 բնակելի և կոմունալ կառույցներ, որոնց մեծ մասը երկհարկանի են՝ կառուցված սրբատաշ քարով ու թրծած աղյուսով։ Վանքի քառանկյուն և բարձր (6—7 մ) պարիսպն ունի 6 հզոր աշտարակներ, և վանական համալիրը հզոր ամրոցի տպավորություն է թողնում։

Ս. Թովմա վանքն իր գլխավոր հատակագծով և ճարտարապետական լուծումներով ուրույն տեղ ունի հայ միջնադարյան ճարտարապետության համալիրների շարքում։

Ագուլիսի ս. Քրիստափոր եկեղեցին ըստ ավանդության և Զ. Ագուլեցու հաղորդած տեղեկությունների. «...Թաթէոս առաքեալն էր շինած. եկավ մինչև թվին ՌՀԹ վերստին այնպէս ին շինել... Սորայ առաջի շինօղն Քրիստոսի առաքեալքն էին։ Սոցա յետնայ վերի թաղի խոշայ Գոպնազարն, Քիչիբէկն, Մալխանն վերակացու եղէն, ժողովրդեան փողով շինեցին, մինչև էհաս այսմ ամի (1671 թ.—Ա. Ա.)»[16]։ Աղբյուրներում ս. Քրիստափորը հիշատակվում է XV դ. կեսերից[17]։ 1682 թ. այդ եկեղեցու գրչատանը «Պատմութիւն Հրեից»-ն է ընդօրինակել նաև Նաղաշ Հովնաթանը[18]։

Նկ. 4. Ագուլիսի ս. Քրիստափոր եկեղեցին։

Ս. Քրիստափոր եկեղեցին (նկ. 4), որն իր հիմնարկությունից հետո մի քանի անգամ վերակառուցվել է, ունի քառամույթ գմբեթավոր բազիլիկայի

15 Զ. Ագուլեցի, նշվ. աշխ., էջ 64, հմմտ. Ե. Լալայան, նշվ. աշխ., էջ 72։

16 Նույն տեղում, էջ 95—96։

17 «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն առաջին (1401—1450 թթ.), կազմեց՝ Լ. Խաչիկյան, Երևան, 1955, էջ 605։

18 Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 329, 331։

հորինվածք։ Այն կազմված է ավագ խորանից, զույգ ավանդատներից և լուսավոր ու բարձր ինտերյեր ունեցող աղոթասրահից։ Վերջինիս չորս խաչաձև կտրվածքով մույթերի վրա կանգնեցված է վեհասլաց ու աղյուսաշար գմբեթը։ Մինչև 1920—1925 թթ. եկեղեցու ծածկում՝ գմբեթից դեպի արևմուտք, եղել է 4 մույթերի հորինվածքով զանգակատան ռոտոնդան։ Եկեղեցին ունի երեք կամարակապ և խորաքանդակ զարդագոտիներով երիզված մուտքեր՝ արևմտյան, հյուսիսային և հարավային ճակատներում (վերջին երկուսը այժմ փակված են)։ Արևմտյան մուտքի բարավորից վերև տեղադրված է մանուկ Հիսուսին գրկած թագակիր Աստվածամոր պատկերաքանդակը, որը ս. Քրիստափոր եկեղեցու 1671—1675 թթ. վերակառուցման ժամանակ Ջ. Ագուլեցին է քանդակել տվել[19]։ Այդ մուտքի փայտյա դուռը քանդակազարդ է։ Եկեղեցու հյուսիսային մուտքի կամարի տակ, քառանկյունի շրջանակի մեջ է առնված գեղեցիկ զարդաքանդակ և խաչ, իսկ հարավային մուտքի բարավորից վերև ընկած տարածությունը զարդարված է քառանկյան և ապա շրջանագծի մեջ առնված ոճավորված խաչի պատկերաքանդակով։ Եկեղեցու հարավային, հյուսիսային և արևմտյան ճակատներում տեղադրված են XVII դ. 22 արձանագիր քարեր և խաչքարեր։ Նշված եկեղեցու հարավային ճակատին կից պարսպապատ և բավականին ընդարձակ տարածքում նկատելի են մի քանի շինությունների հետքեր։ 1867 թ. սկսած՝ այդտեղ գործել է Ագուլիսի օրիորդաց դպրոցը, որը կոչվել է Վերին Ագուլյաց Հայկանուշյան օրիորդաց ուսումնարան[20]։ Եկեղեցու հարավային մուտքի առջև կան XVIII—XIX դդ. մի քանի տապանաքարեր։

Եկեղեցուց մոտ 100—150 մ հարավ եղել են եկեղեցական շինություններ, որոնք այժմ ավերված են։ Արևմտյան ճակատի առջև, նրա ընդլայնական երկարությամբ, շարված է 3—3,5 մ բարձրությամբ պատնեշ-պատ, որի հյուսիսային անկյունում գտնվում է ս. Քրիստափորի հորդահոս, կամարակապ աղբյուրը։

Նկարագրվող եկեղեցու ինտերյերը 1680-ական թվականներին որմնանկարել է Նաղաշ Հովնաթանը։ Այժմ պահպանվել են ավագ խորանի, գմբեթի և մույթերի վերին հատվածների նկարազարդումների առանձին բեկորներ, որոնք ոճական առումով հիշեցնում են ս. Թովմա վանքի տաճարի որմնանկարների արվեստը։ Ս. Քրիստափոր եկեղեցու որմնանկարների բազմերանգ բուսական մոտիվների թվում կան նաև երկրաչափական զարդեր։ Այս եկեղեցում Նաղաշ Հովնաթանը նկարել է նաև դիմապատկերներ, որոնց հետքերը այժմ հազիվ են նշմարվում։

Եկեղեցու այժմյան շինությունը վերանորոգվել է XVII դ. երկրորդ կեսին։ Այդ են վկայում ինչպես Ջ. Ագուլեցու տեղեկությունները[21], այնպես էլ եկեղեցու արձանագրությունները։ Ջ. Ագուլեցու տեղեկություններով, ս. Քրիստափոր եկեղեցին 1670 թ. փլվելուց հետո նրա վերանորոգումը սկսվել է 1671 թ. և ավարտվել 1675 թ. գարնանը։ Եկեղեցու վերանորոգմանը մասնակցել են Վասպուրականից հրավիրված ավելի քան 40 վարպետներ, ինչ-

19 Ջ. Ագուլեցի, նշվ. աշխ., էջ 96։

20 Գ. Գոռշյան, Վերին Ագուլյաց երկու սեռից ուսումնարանների բացվելը և կանոնադրությունը, Մոսկվա, 1868, էջ 25, 35—37։

21 Ջ. Ագուլեցի, նշվ. աշխ., էջ 95—97։

պես նաև ագուլեցի ու շուղայեցի վարպետներ, որոնց աշխատանքները ղեկավարել է Մոկսու «մեծ ուստէն»՝ ճարտարապետը։ 1671 թ. ս. Թովմա վանքում ընդօրինակված մի գրչագիր ժողովածուի համաձայն՝ 1671 թ. «նորոգման սկիզբն եղև եկեղեցւոյն...»[22]։ Զ. Ագուլեցու մեկ այլ տեղեկությունից իմանում ենք, որ ս. Քրիստափոր եկեղեցին նորոգվել է նաև 1630 թ., ագուլեցի Ղօդաղ վարպետի կողմից[23]։

Ս. Քրիստափոր եկեղեցին, որն իրավամբ մայր եկեղեցի է անվանվել, Ագուլիսի ճարտարապետական նշանավոր հուշարձաններից է։

Ագուլիսի ս. Շմավոն եկեղեցու մասին սկզբնաղբյուրներում (վիմագիր և գրավոր) տեղեկություններ չեն պահպանվել։ Ս. Շմավոնը (նկ. 5), որը կառուցված է բարձրադիր հարթ վայրում, մեծ ու սրբատաշ քարաշեն գեղեցիկ եկեղեցի է եղել։ Այժմ կիսախարխուլ վիճակով կանգուն են միայն եկեղեցու

Նկ. 5. Ագուլիսի ս. Շմավոն եկեղեցու տեսքը։

ավագ խորանի առջև գտնվող 2 մույթերը, ավագ խորանի ծածկի մի հատվածը և եկեղեցու արևելյան որմը։ Ս. Շմավոն եկեղեցու ավերակներից դատելով՝ այն քառամույթ հորինվածքով գմբեթակիր հուշարձան է եղել՝ բաղկացած ավագ խորանից, երկհարկանի զույգ ավանդատներից և աղոթասրա-

22 Մ. Սմբատյանց, Նկարագիր սուրբ Կարապետի վանից Երնջակա և շրջակայից նորա, Տփղիս, 1904, էջ 203։

23 Զ. Ագուլեցի, նշվ. աշխ., էջ 149։

հից։ Եկեղեցու արևմտյան և հարավային ճակատներում նկատելի են մուտքերի հետքեր։

Նշված եկեղեցու ճարտարապետական հորինվածքում հետաքրքրական է հատկապես նրա յոթանիստ ավագ խորանը, որն իր կազմությամբ հար և նման է ս. Թովմա վանքի տաճարի ավագ խորանին։ Ս. Շմավոն եկեղեցում նկատելի են նաև որմնանկարների հետքեր։ Հայտնի է, որ եկեղեցուն նվիրված Աչը ունեցել է հետևյալ արձանագրությունը. «Յիշատակ է սուրբ Աչս Վարդանի դստեր Դժխանին, և իւր որդի Ստեփաննոսին, և յիշատակ է Վարդանի որդի Զօհրապին, իւր որդւոցն Օհանիսին, Յակոբին և Շմաւոնին, այս է Աչ սուրբ Առաքելոյն Շմաւօնի, թուին ՌՃԿԶ (1717)»[24]։ Դատելով ս. Շմավոն եկեղեցու ավերակներից և հատակագծային-տարածական հատկանիշներից, կարելի է եզրակացնել, որ այս եկեղեցին ևս կառուցվել է մոտավորապես XII—XIII դդ. և վերանորոգվել XVII դ.։

Կիսավեր վիճակում է նաև Ագուլիսի ս. Հովհաննես-Մկրտիչ եկեղեցին։ Քանդված է եկեղեցու հյուսիսային որմի ընդերկայնական մասի բարձրության կեսը, ավերված են այդ ճակատում, հյուսիս-արևմտյան անկյունում գտնվող միակ մուտքը, ծածկի հյուսիսային հատվածի մի մասը։ Ինտերյերում վնասված են զույգ ավանդատների մուտքերի վերին մասերը, երկրորդ հարկի ավանդատների արևմտյան ճակատների ցածրադիր որմերը, դեպի այդ ավանդատներ տանող քարե աստիճանների շարվածքները և այլ հատվածներ։ Կիսավեր են նաև եկեղեցու պարիսպը և նրա համալիրի շինությունները։

Ս. Հովհաննես-Մկրտիչ եկեղեցին, ինչպես նշում է Զ. Ագուլեցին, եղել է Ներքին Թաղի գլխավոր եկեղեցին[25]։ Մ. Թաղիադյանը սխալմամբ նշել է, որ «Վերնոյ Թաղի եկեղեցին է սուրբ Յովհաննէսը, իսկ Ներքնոյն՝ Աստվածածինը»[26]։ Սա, ըստ երևույթին, արդյունք է Մեծ Աստվածածին եկեղեցու տեղադրության, որը ս. Հովհաննես-Մկրտիչից իրոք որ բավականի ներքև է գտնվում և Ագուլիսի վաղեմի տարածքի՝ շահաստանի, ներքին մասի եկեղեցին է հանդիսացել։ Այն Թաղամասը, ուր գտնվում է ս. Հովհաննես-Մկրտիչը, կոչվել է «Խձայձոր, որ է Ներքի Թաղն...»[27]։ Եկեղեցու և նրա օժանդակ շինությունների ուսումնասիրությունը վկայում է, որ այս հուշարձանի նախկին շինությունը կառուցված է եղել ավելի վաղ շրջանում և վերանորոգվել է XVII դ.։

Ս. Հովհաննես-Մկրտիչ եկեղեցին բաղկացած է ավագ խորանից, երկհարկանի զույգ ավանդատներից և ընդարձակ աղոթասրահից (նկ. 6)։ Վերջինիս ութանիստ կտրվածքով չորս հաստահեղույս մույթերի կամարների վրա կանգնեցված է 8 լուսամուտներով աղյուսաշար գմբեթը։ Ինչպես նշվեց, այժմ ավերված է նաև եկեղեցու մուտքը, որի հորինվածքի մասին պատկերացում կարելի է կազմել գերմանացի նկարիչ Քեստների նկարի միջոցով[28]։ Ըստ այդ նկարի, ս. Հովհաննես-Մկրտիչ եկեղեցու մուտքը ունեցել է քառ-

---

24 «Ճռաքաղ», Մոսկվա, 1862, էջ 87 (տողատակ)։ Ղ. Ալիշանը հրատարակել է նաև ս. Շմավոնի 3 արձանագրությունները՝ մեկը 1458 և երկուսը՝ 1563 տարեթվերով (Նշվ. աշխ., էջ 329—330)։

25 Զ. Ագուլեցի, Նշվ. աշխ., էջ 63, 65, 130։

26 Մ. Թաղիադյան, Ճանապարհորդություն ի Հայս, հ. 1, Կալկաթա, 1847, էջ 254։

27 Զ. Ագուլեցի, Նշվ. աշխ., էջ 92։

28 Ղ. Ալիշան, Նշվ. աշխ., էջ 333, նկ. 99։

անկյուն բացվածք, առանց կամարի։ Մուտքից վերև, շարվածքի երկրորդ շարքում տեղադրված է եղել մի արձանագիր քար՝ «Թ. ՌՃԽԳ» (1694)։ Մուտքն ունեցել է գեղեցիկ փայտյա դուռ, որը «բազմադրուագ, մանր մասամբք փայտից, սատափով և փղոսկրիւ կիտուածեալ, յորում գրուած յամի 1682.

Յիշատակ է դուռնս այս Հախումին
Եւ կողակցին եւ որդոց նոցին,
Ասուած ողորմի աշխատաւորացն. թվ. ՌՃԼԱ»[29]։

Ս. Հովհաննես-Մկրտիչ եկեղեցու և ս. Թումա վանքի տաճարի արևմտյան մուտքի դռներն այնքան նման են, որ կարելի է ենթադրել, թե դրանք նույն վարպետի աշխատանքի արդյունք են։



Նկ. 6. Ագուլիսի ս. Հովհաննես-Մկրտիչ եկեղեցու հատակագիծը (չափագրությունը Ա. Այվազյանի)։

Նկարագրվող եկեղեցին (նկ. 7) կառուցված է սրբատաշ քարերից և որձաքարերից։ Արտաքին տեսքը համեստ է, նույնիսկ անշուք։ Եկեղեցու արևելյան ճակատի արտաքին հատվածը շարված է թրծած աղյուսով։ Ինչպես եկեղեցին, այնպես էլ նրան կից շինություններն ունեցել են քառանկյուն բարձր պարիսպներ՝ հյուսիսից և հարավից դարպասներով։ Եկեղեցու ավագ խորանի հորինվածքը հնգանիստ է, որի որմնախորշերը բավական խոր են և ավարտվում են սլաքաձև կամարներով։ Խորանի հյուսիսային և հարավային անկյունային մասերում՝ որմնախորշերից վերև, ընդգծվում են լայն կամարներով որմնաղարդերը և այդ կամարների վերևի մասերում տեղադրված զարդանախշերը։

Եկեղեցու երկրորդ հարկի ավանդատները, հակառակ առաջին հարկի ավանդատների և ավագ խորանի կազմության, արևելյան մասում ունեն կի-

29 Նույն տեղում, Ե. Լալայան, Նշվ. աշխ., էջ 65։

սաշրջանաձև աբսիդ։ Երկրորդ հարկի խորանները լուսավորվում են արևելյան որմում գտնվող պատուհաններով, որոնցից 30—35 սմ վերև, լրացուցիչ լուսավորության համար, բացված են մեկական շրջանաձև լուսամուտներ։ Երկրորդ հարկի խորաններն արևմտյան մասերում ունեցել են ցածրադիր (60 սմ) պատ, որի ամբողջ ճակատը բաց է և խորաններն օրգանապես կապվել են աղոթասրահի հետ։ 2-րդ հարկ բարձրացել են առաջին հարկի ավանդատների մուտքերի և ավագ խորանի միջև կառուցված քարե աստիճանների

Նկ. 7. Ագուլիսի ս. Հովհաննես-Մկրտիչ եկեղեցու տեսքը։

միջոցով։ Կան մի քանի վերանորոգումների հետքեր, որոնցից երկուսի մասին տեղեկություններ է պահպանել Զ. Ագուլեցին, որոնց համաձայն ագուլեցի վարպետ Սեթյան մահտեսի Մելքումը «այսմ թվիս (1612 թ.—Ա. Ա.) խաչքարու սուրբ Ովանէս եկեղեցին մարամաթի շինեց»[30]։ Եկեղեցու հաջորդ վերանորոգման մասին է վկայում նրա գմբեթի շրջանագծի վրա (ներսից) պահպանվող արձանագրությունը։ Վերջինս գրված է սև ներկով և խոշոր գլխատառերով՝ սպիտակ ֆոնի վրա։ Ըստ արձանագրության.

> Կառուցաւ հո(յ)ակապ եւ հրաշազան. եւ վա(յ)ելուչ երեք բեմեա
> ս(ուր)ք եկեղեցիս յանուն ամենաս(ուր)ք (Ա(ստվա)ծածնին եւ
> ս(ուր)ք Մկրտչին. եւ ս(ուր)ք Նախավկային. ի ՌՃԺԲ (1663) թվին.
> իսկ ՌՃԼԵ (1686) ա(մ)ին գա[ճ]եցաւ։ Եւ ի ՌՃԾԲ (1703) թ(վի)ն
> զարմ(ա)նալի կաթուղիկէս շինեցաւ ի փառս Ք(ր)ի(ստոս)այ[31]։

Այս արձանագրությունը լրացվում և հաստատվում է Զ. Ագուլեցու ճշգրիտ արձանագրած տեղեկություններով[32]։ Ամենայն հավանականությամբ այս վե-

30 Զ. Ագուլեցի, նշվ. աշխ., էջ 141։

31 Այս արձանագրությունը որոշ տարբերություններով հրատարակել է Ե. Լալայանը (նշվ. աշխ., էջ 65)։ Նա եկեղեցին գաշելու տարեթիվն ընդօրինակել է ՌՃԼԸ, որը ճիշտ չէ։ Ինչպես Զ. Ագուլեցին է վկայում, այն գաշվել է ՌՃԼԵ (1686) թվականին (էջ 65)։

32 Զ. Ագուլեցի, նշվ. աշխ., էջ 63—65, 130։

բանորոգման ժամանակ էլ (1663 թ.) կառուցվել են եկեղեցու օժանդակ շինությունները։ Այս մասին Զ. Ագուլեցին նշում է. «պարիսպն քաշեցին, թէ խուց, թէ սեղանատուն շինեցին, ապա պրծաւ»[33]։ Եկեղեցու արևելյան ճակատի պատի տակ, հարավ-հյուսիս առանցքով, կառուցված է եկեղեցու սեղանատունը, որը միաղահլիճ-միանավ հորինվածքով շինություն է։ Այժմ ավերված են այդ սեղանատան արևելյան որմի առանձին հատվածները, ինչպես նաև մուտքերը, ծածկի մեջտեղի հատվածը։ Ս. Հովհաննես-Մկրտիչ եկեղեցու սեղանատան մուտքերը տեղադրված են եղել արևելյան ճակատում, որի ավերակ որմում նկատելի են լուսամուտների հետքեր ևս։ Սեղանատան ինտերյերը ունի մոտ 2,7 մ բարձրություն և սվաղված է։ Ընդերկայնական արևմտյան որմում ունի քառակուսի բացվածքներով բավականին խոր 9 որմնախորշեր։

Նկ. 8, Ագուլիսի ս. Հակոբ-Հայրապետ եկեղեցին։

Սեղանատան հյուսիսային ճակատին կցված է նրա ծածկի բարձրությանը հավասար, արևմուտք-արևելք առանցքով թաղածածկ մի փոքրիկ շինություն, որը հանդիսացել է սեղանատան խոհանոցը։ Այս խոհանոցին կից է եկեղեցու թաղածածկ աղբյուրը։ Ս. Հովհաննես-Մկրտիչ եկեղեցու պարիսպներից ներս, նրա սեղանատան առջև և եկեղեցու հյուսիսային մասում եղել է եկեղեցու գերեզմանատունը, ուր կան XVII—XX դդ. արձանագիր մի շարք տապանաքարեր։

Ագուլիսի ս. Հակոբ-Հայրապետ եկեղեցու հիմնադրման մասին պատմական աղբյուրներում տեղեկություններ չկան։ Այդ եկեղեցին (նկ. 8), որը դեռևս կանգուն է, կառուցված է քառանկյունի պարսպի մեջ։ Ս. Հակոբ-Հայրապետը փոքրածավալ գմբեթավոր դահլիճի հորինվածքով հուշարձան է՝ կառուցված թրծած աղյուսով, իսկ առանձին մասերում՝ սրբատաշ քարերով։

33 Նույն տեղում, էջ 130։

Եկեղեցու հորինվածքը (նկ. 9) բաղկացած է աղոթասրահից և արևելյան մասում ուղղանկյուն խորանից։ Արևմտյան և հարավային ճակատներում ունի մուտքեր։ Ծածկի համարյա մեջտեղում՝ աղոթասրահի երկու զույգ որմնամույթերի միջև ձգված կամարների վրա, բարձրանում է վեց բարձր ու լայն պատուհաններով աղյուսաշար գմբեթը։ Եկեղեցու ինտերյերը ծեփված է և ունեցել է որմնանկարներ։



Նկ. 9. Ագուլիսի ս. Հակոբ-Հայրապետ եկեղեցու հատակագիծը (չափագրությունը Ա. Այվազյանի)։

Ս. Հակոբ-Հայրապետ եկեղեցու ուղղանկյուն խորանը երկհարկանի է։ Առաջին հարկը ուղղանկյուն ավանդատուն է, որը հյուսիսային և հարավային որմերում ունի մեկական քառակուսի բացվածքներով որմնախորշեր։ Խորանում որմնախորշեր չկան և նրա լուսավորումն իրականացված է արևելյան որմում գտնվող լուսամուտով։ Խորանի առաջին հարկի մուտքը բացված է բեմի հյուսիսային անկյունում՝ երկրորդ հարկ բարձրացող աստիճանների տակից։

Ս. Հակոբ-Հայրապետի գմբեթատակ շրջանագծի վրա դեռևս պահպանվող արձանագրությունը, որը գրված է սև ներկով, վկայում է, որ

Վերա[շ]ինեցաւ սուրբ Յակոբ-Հայրապետ. եկեղեցիս կաթողիկոսութեան Հայոց. Մկրտիչի Առաջինի 1901 թ(վ)ին. ընթացս. վեց ամսոյ։

Հետևապես, ս. Հակոբ-Հայրապետի այժմյան կանգուն շինությունը, որը հետաքրքիր ճարտարապետական լուծումներ ունեցող հուշարձան է, նորոգվել է 1901 թ.։ Նախկին շինությունը կառուցված է եղել ավելի վաղ շրջանում։

Ագուլիսի Վերին գետ թաղամասում, լեռնալանջի հարթ փեշին բազմել է այդ թաղամասի եկեղեցին՝ ս. Ստեփանոսը, որի անցյալի մասին շատ քիչ տեղեկություններ են պահպանվել։ Կարելի է ենթադրել, որ այս եկեղեցու նախկին շինությունը կառուցված է եղել ավելի վաղ դարերում և Ագուլիսի մյուս հուշարձանների հետ միասին վերանորոգվել է XVII դ.։ Այս եկեղեցին վերանորոգվել է նաև 1845 թ., ագուլեցի մահտեսի Հովհաննես Տէր-Ջանյանի միջոցներով[34]։

Ս. Ստեփանոս եկեղեցին (նկ. 10) կառուցված է մաքուր տաշած բազալտով և սրբատաշ կարմրերանգ քարերով։ Ունի քառամույթ գմբեթավոր բա-

34 Ե. Լալայան, նշվ. աշխ., էջ 64։

զիլիկայի հորինվածք (նկ. 11), որը իր արևելյան մասում, ավագ խորանի երկու կողմերում ունի մեկական կիսաշրջանաձև խորաններ ևս, որոնց արև-



Նկ. 10. Ագուլիսի ս. Ստեփանոս եկեղեցին։



Նկ. 11. Ագուլիսի ս. Ստեփանոս եկեղեցու հատակագիծը (չափագրությունը Ա. Այվազյանի)։

մրտյան ճակատները գլխավոր խորանի նման բաց են և կապված են աղոթասրահի հետ։ Խորանների տակ կան նկուղային հարկեր-ավանդատներ, որոնց մուտքերը բացված են բեմի ճակատային մասից և իջնում են դեպի ներքև։

Ս. Սահականոս եկեղեցու քառանկյուն հիմքերով չորս խաչաձև կտրվածքով մույթերի վրա բարձրանում է քարակերա գմբեթը։ Եկեղեցին իր հյուսիսային, հարավային և արևմտյան ճակատներում ունի մուտքեր, որոնք երիզված են դեղեցիկ և ձևավոր քանդակաղարդերով։ Ժամանակին այդ մուտքերի կամարների տակ տեղադրված են եղել բարձրաքանդակներ։ Եկեղեցու հարավային մուտքի առջև կառուցված է եղել երկու մույթերի հորինվածքով եռահարկ դանդակատուն, որն ավերվել է 1930-ական թվականներին։ Ս. Ստեփանոս եկեղեցու օժանդակ և կոմունալ շինություններն առնված են եղել այժմ ավերված քառանկյուն պարսպի մեջ։

Ագուլիսի ճարտարապետական հուշարձանները հայ ճարտարապետության աչքի ընկնող կառույցներից են։ Դրանք լրացնում են Հայաստանի ճարտարապետական հուշարձանների ամբողջական պատմությունը և կարևոր են միջնադարյան հայ ճարտարապետության առանձնահատկությունների ուսումնասիրման համար։

АРХИТЕКТУРНЫЕ ПАМЯТНИКИ АГУЛИСА

АРГАМ АЙВАЗЯН

Резюме

Средневековый армянский город Агулис находился недалеко от города Ордубада (Нах. АССР). Агулис славился двенадцатью архитектурными памятниками: монастырями и церквами, такими, как монастырь св. Товмы, церкви св. Христофора, св. Шмавона, св. Ованес-Мкртича, св. Акопа-Айрапета, св. Степаноса, которые являются важными архитектурными памятниками армянского средневекового зодчества.